Մրցույթ՝ << ՀՀ Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կենսաբանության (10 դասաժամ), բնագիտության(1դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), ԹԳՀԳ-ի (5 դասաժամ), հայոց լեզվի (2 դասաժամ), գրականության (3 դասաժամ) , երաժշտության (5 դասաժամ) , կերպարվեստի (5 դասաժամ), տեխնոլոգիայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 11 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 17 -ին ՝ ժամը 15:30-ին, <<<< Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արարատի մարզ, գ. Դարբնիկ Անդրանիկի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 99-99-81 հեռախոսահամարով: